ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՊԻՏԱԼ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 2043-Ա/Ա

ք. Երևան « » դեկտեմբերի 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Գ. Սաֆարյանի (այսուհետ պետական մարմին), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ-ը (այսուհետ կազմակերպություն), ի դեմս տնօրեն Ք. Աբրահամյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 2043-Ա որոշումը (այսուհետ որոշում), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է «Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ-ին անհրաժեշտ մասնագիտական նյութատեխնիկական բազայի ձեռքբերման համար «Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրել՝ **9 923 800** (ինը միլիոն ինը հարյուր քսաներեք հազար ութ հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է միջոցառումն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված 1-ում, իսկ ձեռքբերվող գույքի նախահաշիվը՝ հավելված 2-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.1.5. Պայմանագրի 2.4.4-րդ ենթակետով սահմանված ժամկետում կազմակերպությունից պահանջել ներկայացնել նույն ենթակետով նախատեսված հաշվետվությունը,

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. գնման պայմանագիրը կնքելուց հետո 10-օրյա ժամկետում Պետական մարմին ներկայացնել գնման պայմանագրի պատճենը, իսկ միջոցառումների ավարտից հետո սույն Պայմանագրի 6.1. կետով սահմանված ժամկետում Պետական մարմին ներկայացնել ֆինանսական և բովանդակային հաշվետվություն՝ իր կողմից իրականացված ծախսերի և կատարված միջոցառման մասին (նախահաշվի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ

փաստաթղթերը գտնվում են Կազմակերպության մոտ, վերջինս պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար):

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան

2.4.7. չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսումները, խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև սույն Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների (ֆինանսական և բովանդակային) ընդունմանը հաջորդող 15-րդ աշխատանքային օրը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Նախարարությունը՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը կազմակերպությանը տրամադրում է համաձայն ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 2043-Ֆ որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է Պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 0.5 տոկոսի չափով: Տուգանքը հաշվարկվում է նաև Պայմանագիրը դրանով սահմանված ժամկետներում կատարելու, սակայն Պետական մարմնի կողմից չընդունվելու դեպքում: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

5.2. Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումների համար պայմանագրով սահմանված ժամկետները Կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պետական մարմնին վճարում է տույժ՝ հանձնման ենթակա, սակայն չհանձնված աշխատանքների արժեքի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.3. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Կազմակերպությունը Պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.15 (տասնհինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.4. Պետական մարմինը 5.1., 5.2. և 5.3. կետերով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը: Պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2023թ. սեպտեմբերի 1-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև Պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը, սակայն ոչ ուշ, քան 2023 թվականի դեկտեմբերի 7-ը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, նախարարությունների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից

յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին	Կազմակերպություն
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն N 2	Ք.Երևան, Թամանցիների 71
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչության
Հ/Հ 900011040145	Հ/Հ 900018005562
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 02566811
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
Գ. Սաֆարյան	Ք. Աբրահամյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 1
2022 թ. դեկտեմբերի -ին
կնքված N -Ն/11 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառումներ					
	անվանումը	**համառոտ բովանդակությունը**	**կատարման ենթակա գործառույթների նկարագիրը**	**ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները**	**վերջնա-ժամկետը**	**պահանջվող գումարը (դրամ)**
1	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսումնարտադրական բազայով ապահովում	«Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ-ին անհրաժեշտ մասնագիտական նյութատեխնիկական բազայի ձեռքբերում՝ համաձայն հավելված 2-ով հաստատված նախահաշվի	Գույքը ձեռք է բերվում «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով	Մասնագիտական նյութատեխնիկական նոր բազայով ապահովված քոլեջ	01.09.2023թ.	9 923 800
		Ընդամենը՝				**9 923 800**

Պետական մարմին
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011040145
ՀՎՀՀ 02698732
Պետական քարտուղարի՝
Գ. Սաֆարյան
(ստորագրություն)

Կազմակերպություն
«Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ
Ք.Երևան, Թամանցիների 71
ՀՀ ՖՆ գործառնական վարչության
Հ/Հ 900018005562
ՀՎՀՀ 02566811
Տնօրեն
Ք. Աբրահամյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 2

2022 թ. դեկտեմբերի -ին

կնքված N -Ն/11 պայմանագրի

«Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ-ի համար անհրաժեշտ ձեռքբերվող գույքի նախահաշիվ

N/N	*Անվանում*	*Տեխնիկական բնութագիր*	*Քանակ*	*Միավորի արժեք /ՀՀ դրամ/*	*Ընդամենը /ՀՀ դրամ/*
	Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ				**122,900**
1	Բոռ ապարատ Marathon Champion 3	Արտադրման երկիր: ԱՄԵ Ապրանքանիշ: Մարաթոն Տեսակ: Մատնահարդարման համար նախատեսված Սնուցում: Հոսանքից Հզորություն: 64վտ Պտտման առավելագույն արագություն: 35000 Նասատկաների քանակ: 1 Պտտման ուղղությունը: Ուղիղ, հակադարձ Գույն: Սպիտակ Քաշ: 1850գ Երաշխիք՝ 6 ամիս	1	47,000	47,000
2	Մատնահարդարման լամպ **Sun x plus**	Ապրանքանիշ: ՍԱՆ Արտադրման երկիրը: ԱՄԵ Հզորություն: 72վտ Գույն: Սպիտակ Սնուցում: հոսանքից Քաշ: 600գ Կառուցվածք: 2 ձեռքի համար	2	12,000	24,000

3	Մատնահարդարման վրձինների հավաքածու	1. Նյութը՝ փայտ + մետաղ 2. Գույնը՝ սպիտակ 3. Երկարությունը՝ 13-20.5սմ 4. Հավաքածուն ներառում է: 5. Քաշը՝ 40 գրամ Գծային վրձին. նախատեսված է նուրբ գծային զարդանախշի համար: Սուրմա վրձին. մաքսիմալ բարակ գծերի համար, տերևներ, ծաղիկ և այլ պատկերներ նկարելու համար: Տերևաձև վրձին. նախատեսված է ավելի խոշոր պատկերների համար: Վրձին փետուր. ծաղկային յուրահատուկ էֆֆեկտներ ստանալու համար: Վրձին ֆոտոթերապիա. նախատեսված է արհեստական եղունգների համար: Վրձին դրիլ. քարիկներ դնելու համար Հովիար վրձին.ալիքաձև զարդանախշեր ստանալու համար	1	2,700	2,700
4	Մատնահարդարման գործիքների հավաքածու	1.Մատնահարդարման մկրատ՝ Zinger 1303 Արտադրող երկիր՝ Գերմանիա Գործողություն՝ Կուտիկուլայի խնամք	1	10,000	17,700
		2. Կուտիկուլայի գործիք Staleks Smart Արտադրման երկիր: Украина Ապրանքանիշ: Staleks Տեսակ: Մատնահարդարման համար նախատեսված Կտրող գործիք Գույն: Մոխրագույն	1	5,500	
		3. Ապրանքանիշ: Daccordo Արտադրող երկիր: ԱՄԵ Երկարություն: 145մմ Նյութ: նիկելապատ պողպատ Նախատեսված է: Ոտնահարդարում, Մատնահարդարում Գույն: Արծաթագույն	1	2,200	
5	ՉՈՐ ՎԱՌԱՐԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՍՏԵՐԻԼԻԶԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ CH-360T	Նախատեսված է մատնահարդարման և պեդիկյուրի գործիքների ստերիլիզացման համար: Պատրաստված է չժանգոտվող պողպատից:Սարքի ներսում կա հատուկ շարժական տարա ՝գործիքները պահելու և մանրէազերծելու համար:Չոր	1	19,000	19,000

		վառարանը հագեցած է բոլոր անհրաժեշտ գործառույթներով՝ բարձրորակ ստերիլիզացման համար: Ջերմաչափը թույլ կտա ձեզ վերահսկել ստերիլիզացման ժամանակը:Առկա է ջերմաստիճանի ռեժիմներ՝ 1-ից 60 րոպե: Ջերմաստիճանը որոշվում է՝ կախված գործիքի նյութից: Առկա է ջերմաստիճանի միջակայք՝ 0-ից 220 ° C: Հզորությունը՝ 300 Վտ:			
6	Դիմահարդարման վրձինների հավաքածու 7-ը 1-ում	1) Դիմահարդարման վրձինների պայուսակ 2) Ձեր առօրյա դիմահարդարման համար նախատեսված 7 հիմնական վրձինատեսակ 3) Հավաքածուն ներառում է պայուսակ, որը մեծ հարմարավետություն է ստեղծում վրձինների հավաքածուն ճանապարհորդությունների ժամանակ կրելիս: 4) Հարմար է ճանապարհորդությունների ժամանակ 5) Նախատեսված է առաօրյա և պռոֆի գործածման համար: 6) Վրձինները կօգնեն Ձեզ անգամ առօրյա կյանքում լինել խնամված և գեղեցիկ 7) Հավաքածուն իր մեջ ներառում է 7 վրձին և պայուսակ; - 1 x Դեմքի վրձին - 1 x Շրթունքի եզրագծման վրձին - 3 x Ստվերաներկի բլենդ վրձին - 1 x Հոնքերի սանր վրձին - 1 x Վրձին աչքերի համար 8) Size: - Չափսերը փակված վիճակում՝ 218x175մմ - Չափսերը բացված՝ 175x80x13մմ	1	12,500	12,500
		Խոհանոց			664,860
1	Սառնարան SAMSUNG RB30A30N0WW/WT No Frost	Երաշխիք: 12 ամիս Ընդհանուր ծավալ: 311 լ Սառնարանի ծավալ: 213 լ Սառցախցիկի ծավալ: 98 լ	1	295,000	295,000

		Սառեցման համակարգ: NoFrost Սառնարան: NoFrost Սառցախցիկ: NoFrost Սառցախցիկի դիրք: Սառցախցիկը՝ ներքևում Էներգախնայողության դաս: A+ Աղմուկի մակարդակ: 37 dB Գույն: սպիտակ Չափսեր: 178 x 67.5 x 59.5 սմ			
2	Էլեկտրական վառարան DIAMOND DM-4904	Երաշխիք: 6 ամիս Հզորություն: 2200 Վտ Ծավալ միկրո: 52լիտր Կառավարման համակարգ: Մեխանիկական Էկրան: Ոչ Հալեցման ռեժիմ: Ոչ Ափսեյի պտտման հնարավորություն: Ոչ Ձայնային ազդանշան: Այո Գրիլի հնարավորություն: Ոչ	1	62,000	62,000
3	Ջրաուռքացուցիչ"Geyzer" L.I.Z. 70303 W120	Արտադրող երկիր՝ Չինաստան Լարում (Վ) 220-240 Հզորությունը (Վտ) 3-3.6 Ճնշում(բար) 0.04-0.05 Ջրակայուն IXP4 Տեսակը Էլեկտրական	1	29,600	29,600
4	Խոհանոցային կոմբայն BOSCH MUMS2VM00	Ամանի պատրաստ.նյութը Չժանգոտվող պողպատ Սպրանքանիշ Գերմանիա Արագությունների քանակը/տուրբո ռեժիմ 7 Արտադրող երկիր Չինաստան Աքսեսուարների քանակը 2 Գույն Սև-Արծաթագույն Հզորությունը (Վտ) 900 Տարողություն(լ) 3.8	1	101,200	101,200

5	Սպասք լվանալու սարքBERG BDW-GZ409DW5	Աղմուկ (dB) 49 Ապրանքանիշ Գերմանիա Արտադրող երկիր Չինաստան Գույն Սպիտակ Դաս Ստանդարտ Դարակների քանակը 2 Էներգախնայողության դաս A++ Լվացքի դաս A Ծրագրերի քանակ 5 Հատուկ հնարավորությունՈչ	1	143,300	143,300
6	Թավաների հավաքածուMuhler 1003871 Cooking Pot Set 8 Pieces	Արտադրող: Muhler Քանակ: 4 հատ Ծածկույթ: չժանգոտվող պողպատ Կափարիչ: Այո Տրամագիծ: 16/20/24/24 սմ Տեսակ: կաթսաների և թավաների հավաքածու	1	33,760	33,760
	Ատամնատեխնիկական կաբինետ				**60,000**
1	Էլեկտրոշպատել Китай	• Электрошпатель с двумя независимыми рукоятками для работы с восковыми моделями в стоматологической ортопедии. • независимый нагреватель двух шпателей, цифровая индикация заданной и реально достигнутой температуры. • диапазон температуры — от 50 до 200 градусов Цельсия. В комплект входит: шпатель — 2 шт, подставка под шпатель — 2 шт, блок управления — 1 шт, насадки — 6 шт.	2	30,000	60,000
	Դեղագործություն				**32,440**
1	Էլ. կշեռք SUPER (ձեռքի)	10-50կգ գույնը սև	2	1,850	3,700
2	Չափիչ բաժակ Փայրեքս, 500 մլ	• Հեշտ ու տեսանելի չափիչ սանդղակ, պարզ նշաններ • Հարմարավետ բռնակ՝ ավելի հեշտ բռնելու համար • Արտաքին չափսեր՝ 16սմ x 12 սմ x 12 սմ Փայրեքս բորոսիլիկատ ապակու առավելությունները՝ •Դիմակայում է նույնիսկ էքստրեմալ ջերմաստիճանների դեպքում ՝ -40 ° C-ից մինչև + 300 ° C • Կայուն է մինչև 220 ° C ջերմային կտրուկ տատանումների նկատմամբ: Ապակին կարելի է - 20 ° C ջերմաստիճանով սառնարանից տեղափոխել մինչև	3	3,790	11,370

		+200 ° C ջերմասիճան ունեցող ջեռոց •Չի պարունակում բիսֆենոլ A,պատրաստված է հիգիենիկ մատերիալներից,ինչը զերծ է պահում քերծվածքներից և տհաճ հոտերից •Քերծվածքների նկատմամբ կայունություն			
3	Կլասիկ չափիչ բաժակ Փայրեքս, կափարիչով, 1 լ	• Հեշտ ու տեսանելի չափիչ սանդղակ, պարզ նշաններ • Հարմարավետ բռնակ՝ ավելի հեշտ բռնելու համար • Արտաքին չափսեր՝ 21սմ x 16 սմ x 11 սմ Փայրեքս բորոսիլիկատ ապակու առավելությունները՝ •Դիմակայում է նույնիսկ էքստրեմալ ջերմաստիճանների դեպքում ՝ -40 ° C-ից մինչև + 300 ° C • Կայուն է մինչև 220 ° C ջերմային կտրուկ տատանումների նկատմամբ: Ապակին կարելի է - 20 ° C ջերմաստիճանով սառնարանից տեղափոխել մինչև +200 ° C ջերմասիճան ունեցող ջեռոց •Չի պարունակում բիսֆենոլ A,պատրաստված է հիգիենիկ մատերիալներից,ինչը զերծ է պահում քերծվածքներից և տհաճ հոտերից •Քերծվածքների նկատմամբ կայունություն	3	5,790	17,370
	ԱՅԼ տեխնիկա և կահույք				**7,804,200**
1	Համակարգիչ Lenovo IdeaCentre 3 22ITL6 21.5"	Տեսակ - Համակարգիչ ամբողջը մեկում Պրոցեսոր - Intel Celeron 6305 1.80 GHz Օպ. Հիշողություն - 4GB DDR4, 3200MHz Կոշտ սկավառակակիր - 128GB SSD Տեսաքարտ - Intel UHD Graphics Օպտիկական սկավառակակիր – Ոչ Wi-Fi անլար միակցում - 802.11ac 2x2 + BT 5.0 Օպերացիոն համակարգ - NO OS Էկրանի անկյունագիծ - 21.5", FHD Ստեղնաշար - Այո (լարային) Մկնիկ - Այո (լարային) Երաշխիք - 1 տարի	10	250,000	2,500,000
2	Պրոեկտոր BenQ MX507	BenQ MX507 Business Projector Արտադրող: Benq Երաշխիք: 12 ամիս Տեսակ: DLP Սեփական կետայնություն:640x480 պիքս.	2	30,000	600,000

		Առավելագույն կետայնություն:1600x1200 պիքս. Հզորություն: 915-1090 Վտ Էներգիայի սպառում: 270 Վտ 1 Քաշ: 1.80 կգ Չափսեր: 283 x 95 x 222 մմ			
3	Ինտերակտիվ էլեկտրոնային գրատախտակ FITOUCH FIT-TBI84D	Nano surface + XPS + Galvanized board 2. Nano surface + Aluminum honeycomb + Galvanized board 3. Ceramic surface + Aluminum honeycomb + Galvanized board Frame Dimension 1704mm x 1252mm mm x 31mm Shortcut menu 20 shortcut Effective touch area 1643.5mm x 1191.5mm(including shortcut menu) Touchable Diagonal length 2030mm(79.9" including shortcut menu) Effective projection area 1588.67 X 1191.5mm Frame diagonal length 2113.57mm (83.2") Effective aspect ratio 4:03 Packing dimension 1890mm x 1395mm x 80mm Gross Weight 24.2 KG(net weight16.8KG)	2	460,000	920,000
4	Օդորակիչ CENTEK CT-65F13	Սպրանքանիշ Ռուսաստան Արտադրող երկիր Չինաստան Արտաքին բլոկի չափերը ԲxԼxԽ (սմ) 50x66x24 Գազի տեսակR410a Հզորություն (BTU) 12000 Հզորություն (հովացում/տաքացում) կՎտ 1106-1011 Հիմնական ռեժիմները Տաքացում և հովացում Մին. ջերմ. ջեռուցման ռեժիմում(-7*C) Միջին մակերես(մ2) 35 Ներքին բլոկի չափսերը ԲxԼxԽ (սմ)20x75x28.5 Ներքին/Արտաքին աղմուկը (դԲ) 26-52 Ջերմային հզորություն (կՎտ) 3650 Սառեցման հզորություն (կՎտ) 3550 Տեսակը Սպլիտ	2	149,900	299,800

		Ֆիլտրը Ածխային			
5	Դպրոցական սեղան և աթոռ	Երկտեղանի սեղանը իր 2 աթոռներով Փայտից սեղան և աթոռ՝ մետաղական կարկասով: Աթոռը՝ ընդհանուր բարձրություն՝ 78 սմ, նստելու տեղը՝ 36*36, մեջքը՝ 36*15, գետնից նստելու տեղը՝ 39 սմ	40	38,000	1,520,000
6	Գրատախտակ կավիճի համար 120x200	120 x 200 սմ. Ալյումինե շրջանակով. Արտադրող երկիր Չինաստան.	5	28,000	140,000
7	Քարտեզներ	1. Աշխարհի քաղաքական քարտեզ 156x100 սմ Մասշտաբը՝ 1: 20 000 000, ռուսերեն լեզվով, լամինացված թղթից	1	15,800	44,600
		2. Եվրոպայի քաղաքական քարտեզ 115x160 սմ Ռուսերեն լեզվով, լամինացված թղթից	1	18,500	
		3. ՀՀ վարչական քարտեզ 68x82 սմ Ռուսերեն լեզվով, ոչ լամինացված թղթից	2	3,700	
		4. Աշխարհի ֆիզիկական քարտեզ 67x98 սմ Մասշտաբը՝ 1:34000, ռուսերեն լեզվով, ոչ լամինացված թղթից	1	2,900	
8	Տպիչ Canon Pixma IX-6840	Գունավոր թանաքաշթային Տպման արագություն - սև 14.5 նկար, գունավոր 10.4 Տպման կետայնություն - 9600 x 2400 dpi Երկկողմանի տպագրություն – ոչ Ցանցային – ոչ Wi-Fi – այո Միակցման տեսակ - USB 2.0 Քարտրիջ/ Տոներ - Քարտրիջ CLI-450, 451	1	159,900	159,900
9	Ղեկավարի սեղան Moreno 50203	Ապրանքատեսակ: Գրասենյակային սեղան Լամինատե, անկյունային սեղան	3	250,000	750,000
10	Համակարգչային սեղան VAH-004	Արտադրող երկիր՝ Հայաստան Երկարություն՝ 1200մմ	10	54,000	540,000

		Լայնություն՝ 600մմ Բարձրություն՝ 750մմ՝			
11	ՆոթբուքHP 250 G8 (2W8X9EA) 15.6 (I5-1135G7) 8GB 256GB SSD (SL)	Հարվածակայուն Իրան Ոչ Պաշտպանություն փոշուց և ջրից Ոչ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԸ SSD (ԳԲ)256 GB Գույն Silver Գրաֆիկական Պրոց.Intel Iris Xe Graphics Էկրանի Չափս 15.6 IPS Կենտր.պրոցեսոր i5-1135G7 Կետայնություն 1920x1080 (FHD) IPS (60HZ) Կոշտ սկավառակ HDD (ԳԲ)Ոչ Հաճախականություն (ԳՀg)2.4-4.2 GHz Սենս. Էկրան Ոչ Քաշ (կգ) 1.74 ՕՀ Չծրագրավորված Օպերատիվ Հիշ. (ԳԲ)8GB DDR4 (2666Mhz) Օպտ.սկավառակակիր Ոչ	1	329,900	329,900
		Ռակերչական լաբորատորիա			**1,239,400**
1	Բորմեքենա 400W TOTAL TG504062 10821	TOTAL TG504062 – բազմաֆունկցիոնալ փորագրիչը հարմար է տարբեր աշխատանքների համար , ներառյալ փորագրություն , ֆրեզեր , աղացում , հղկում և այլն : Ճկուն լիսեռը հեշտացնում է դժվարամատչելի վայրերի մուտքը : Պտտման արագության ճշգրտումը թույլ է տալիս ընտրել օպտիմալ ռեժիմ՝ նյութերի հետ աշխատելու համար : Փորագրիչի վրա օդափոխիչները պահում են շարժիչը սառը՝ երկարացնելով ծառայության ժամկետը : Լարումը՝ 220 – 240 Վ 50/60 Հg. : Հզորությունը՝ 400 Վտ. : Առանց բեռի արագությունը՝ 15000 – 26000 պտ / րոպե : Ցանգի չափը՝ 6 մմ. : Ապրանքի չափը՝ 230 x 45 x 60 :	2	28,200	56,400

		Քաշը՝ 1.7 կգ. : Երաշխիքը՝ 1 տարի			
2	Ոսկերչական վալց+Փուքս	Ոսկերչական վալց իր փուքսի հետ միասին	2	130,000	260,000
3	Ոսկերչական ֆիլեր	Ոսկերչական ֆիլեր թել քաշելու հնարավորություն 400-20 չափերը	20	240,00	480,000
4	Ոսկերչական սեղան	Գտնվում է լավ վիճակում, քիչ օգտագործված	30	30,000	90,000
5	Վառարան/Մուֆել/	Մեջի չափսերը 10.15.35սմ	1	280,000	280,000
6	Ոսկերչական փուքս	գտնվում է նորմալ վիճակում	3	11,000	33,000
7	Ոսկերչական շառ	Փորագրության եվ քար գցելու համար	1	40,000	40,000
		ԸՆԴԱՄԵՆԸ			**9,923,800**

Պետական մարմին

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011040145
ՀՎՀՀ 02698732
Ղեկավար՝ Քարտուղարի

02698732

Ս.Մաթևոսյան
(ստորագրություն)

Կազմակերպություն

«Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ
Ք.Երևան, Թամանցիների 71
ՀՀ ՖՆ գործառնական վարչության
Հ/Հ 900018005562
ՀՎՀՀ 02566811
Տնօրեն

Բ. Աբրահամյան
(ստորագրություն)

Կ.Տ